

ՀՈՒՆԻՍ 2021

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



Երևան 2021



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություններ	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	12
2.4. Դեֆիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	15
3. Տեխնիկական տնօրինություն	16
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	21
3.5. Գոտիավորման աշխատանքներ	22
3.6. Քլորի և խլեղու ջրի մաքրման կայանների ծառայություն	24
3.7 1-85 թեժ գիծ	27
4. Լրատվական ծառայություն	28
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	31
5.1. Փաստաթղթերի մշակում	32
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	32
5.3. Դասընթացներ/սեմինարներ	32
5.4. ԱԻ և ՔՊ մասով համագործակցություն լիազոր մարմինների հետ	34
5.5 Ռիսկերի հայտնաբերում/Մեղմացնող միջոցառումների կիրառում	35
5.6 Այլ աշխատանքներ	35
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	36
6.1. Համակարգչային ցանց	37
6.2. Ինտերակտիվ համակարգ	37

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարադրոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Քաղաք Երևան

● «Էրեբունի» տեղամասի սպասարկման տարածք. Կենտրոն տեղամասի աշխատակիցների կողմից Վարդաշեն 12 փողոցի $D=150$ մմ քայքայված պողպատե ջրագիծը փոխարինվել է $D=110$ մմ $L=113$ զ/մ և $D=63$ մմ $L=200$ զ/մ պոլիէթիլենային խողովակներով: Իրականացված աշխատանքների ընթացքում թվով 18 բնակիչ-բաժանորդի ջրաչափերը փոխարինվել և տեղադրվել են տարածքից դուրս ջրաչափական դիտահորերում:



Արարատի մարզ

● Բարձրաշեն համայնքի Շիրազի փողոցում «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է $d=73$ մմ անոթակ, տեխնիկապես սխալ կառուցված պոլիէթիլենային ջրագիծը $d=63$ մմ $L=150$ զ/մ երկարությամբ նոր պոլիէթիլենային խողովակներով: Թվով 10 բնակիչ-բաժանորդի ջրաչափերը փոխարինվել և տեղադրվել են տարածքից դուրս ջրաչափական դիտահորերում:



Կոտայքի մարզ

● «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից Կոտայքի մարզի, Ջրառատ Համայնքում գտնվող $d=250$ մմ պողպատե քայքայված ջրագծի $L=2000$ զ/մ երկարությամբ հատվածը, որն անցնում էր գերեզմատան միջով, շահագործումից հանվել է և այլընտրանքային հետագծով կառուցվել է նոր $d=110$ մմ $L=1600$ զ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով նոր ջրագիծ: Ջրագծի միացման հատվածում տեղադրվել է $d=100$ մմ մուտքային փականային հանգույց: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է 10լ/վրկ ջրաքանակ:



Սյունիքի մարզ

● «Մեղրի» տեղամասի աշխատակիցների կողմից քաղաք Ագարակ, Չաբենցի փողոց թիվ 25 բազմաբնակարան շենքը սնող քայքայված և խցանված պողպատե ջրագիծը փոխարինվել է $d=63$ մմ $L=80$ զ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Իրականացված աշխատանքների արդյունքում շենքում վերականգնվել է շուրջօրյա ջրամատակարարումը:



Հունիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	5765
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	27595
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	30900
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	14660
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	6
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4488
Կառուցված ջրագիծ	մ	6023.5
Կառուցված կոյուղագիծ	մ	346
Վերացված գաղտնի վթարներ	հատ	34
Փոխարինված փական	հատ	52
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	644
Մաքրված դիտահոր	հատ	656
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	219.3
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	1163
Ջրահեռացման ցանցում	հատ	1914
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	496

Հունիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	774	1142	425

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՊԻՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքները	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	252	7	0	1	1	0	0	0	0	261
Փոխարինված	332	18	3	4	2	0	0	0	1	359
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	305	64	7	8	0	4	0	1	0	389
Ընդամենը	889	89	10	13	3	4	0	1	1	1010

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 1010 ջրաչափ: Կատարված աշխատանքների 88 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	740	216	0
2	Մաշտոց	1490	171	12
3	Շահումյան	1471	107	87
4	Զեյթուն	230	162	24
5	Շիրակ	405	481	49
6	Արթիկ	210	89	0
7	Ապարան	0	24	0
8	Ալավերդի	1860	18	24
9	Աշոցք	0	4	0
10	Բերդ	0	10	8
11	Իջևան	1045	39	3
12	Լոռի	2020	190	3
13	Նոյեմբերյան	40	17	0
14	Սպիտակ	100	19	0
15	Ստեփանավան	350	20	0
16	Թալին	0	13	0
17	Տաշիր	230	7	0
18	Էջմիածին	0	0	0
19	Չարենցավան	570	77	0
20	Արուսյան	2160	64	0
21	Հրազդան	1090	95	8
22	Աշտարակ	0	0	0
23	Կենտրոն	735	215	11
24	Հյուսիս	110	166	0
25	Հարավ	40	257	26
26	Էրեբունի	0	146	0
27	Արմավիր	0	99	0
28	Արտաշատ	0	95	0
29	Էջմիածին	0	102	0
30	Աշտարակ	0	46	0
31	Արարատ	0	58	0
32	Մասիս	0	41	0
33	Գավառ	630	11	0
34	Սևան	340	79	0
35	Մարտունի	0	23	0
36	Վարդենիս	310	12	0
37	Ճամբարակ	0	18	0
38	Դիլիջան	90	48	0
39	Վայք	315	14	0
40	Եղեգնաձոր	0	12	0
41	Զերմուկ	0	25	0
42	Սիսիան	430	86	0
43	Գորիս	0	41	0
44	Կապան	335	73	0
45	Մեղրի	40	28	0
	Ընդամենը	17386	3518	255

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. Սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանում Wilo մակնիշի 35 կվտ հզորությամբ պոմպի աշխատանքը խափանվել էր: Ապամոնտաժելուց հետո պարզվեց որ շարքից դուրս էր եկել առանցքակալը և մեխանիկական խծուծը: Արդյունքում փոխարինվեցին վերոնշյալ մասերը և պոմպը տեղադրվեց: Այժմ պոմպակայանն աշխատում է իր բնականոն ընթացքով:

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում շարքից դուրս էր եկել էլեկտրական դարպասներից մեկը և անհնար էր դարձել մուտք ու ելքը: Անհրաժեշտ պահեստամասեր ձեռք բերելուց հետո այն վերանորոգվեց և այժմ աշխատում է բնականոն ռեժիմով: Վնասվել էր նաև բարձր լարման ենթակայանի պարպիչը, որն էլ փոխարինվեց նորով: Կատարվեց նաև բոլոր սարքավորումների զննում և կարգաբերում:

- Մարտունի կեղտաջրերի մաքրման կայանում խափանվել էր օդամուղի աշխատանքը: Այն ապամոնտաժելուց հետո պարզվեց, որ կոտրվել է ռոտորը: Ռոտորը ձեռք բերելուց հետո այն փոխարինվեց և այժմ աշխատում է բնականոն ընթացքով: Կատարվեց նաև բոլոր ռեդուկտորների և շարժիչների զննում:

- Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	69,687	23,4
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	77,210	27
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	137,410	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	135,758	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	113,854	19,8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	15,128	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	1,0896	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	11,900	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	18,800	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	4,840	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի գնում և կարգավորում	108
Էլեկտրական սարքերի գնում և կարգավորում	5
Այցեր	3
Պոմպի տեղադրում	5
Պոմպի ապամոնտաժում	2
Պոմպի վերանորոգում	3

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հունիս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 7 մեքենայի շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 2 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 13 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուոնդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 21 անվադող նորոգվել, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 1 մեքենայի մարտկոց փոխարինվել է նորերով:

Փոխարինվել են թվով 55 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 4 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 6 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 10 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուտի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ: Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 4 մեքենա-մեխանիզմի վրա:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 12 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 2 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել է թվով 4 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 5 մեքենայի վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Քանդող բազուկի նորոգում է կատարվել թվով 5 մեքենա-մեխանիզմի վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.07.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 550,302 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. հունիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	652,313	526,320	80,7
	Իրավաբանական անձ	29,487	23,982	81,3

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	727,324	574,738	79,0
	Իրավաբանական անձ	34,824	25,024	71,9

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 690 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4190 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 07.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1618	1949	369	3936
	Իրավաբանական անձ	96	131	27	254
	Ընդամենը	1387	1795	308	4190

Ստուգաչափված ջրաչափ



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հունիս ամսին փոխարինված 4190 ջրաչափերի մոտ 59%-ը (կամ 2476 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 214,718 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հունիս ամսին գանձումը կազմել է 1,893 մլն դրամ (98 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. ապրիլ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում

Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հունիս ամսին զերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այդ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները): Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հունիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 133 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 15,7 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10619	1478010576	7225	754200676	158	20991281	3236	702818619	4189	373993924


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 68 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.07.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում մայիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,191	2,172
Բնակիչ-բաժանորդներ	6,076	1,438
Իրավաբանական անձեր	2,115	734

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 265.6 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.07.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	693,551	573,070	82.63	33,692	25,015	74.25
	Առանց ջրաչափի	33,773	1,668	4.94	1,132	9	0.80

Տվյալների բազայում 01.07.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	865,680	385,925	44.58	37,613	10,303	27.39

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում՝ թաղամասային ծրագրով) շուրջ 5361 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1221 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2340	1915	81.7
գ.Պոռշյան	1578	1048	66.2
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5879	1831	32.1

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 9052, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 8083, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1239, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1957, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1139, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1524 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3606 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Բնտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառնությունը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	408	217,027	35,652,141

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ*




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի հունիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը, որը կազմել է՝ 96.0%, ինչը 0.3% ցածր է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 31 ՃԿՓ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2021թ-ի հունիս ամսին, 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 95 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 1060 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 37 476 ԿՎտ/ժ. (8,21%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ, ինչը կապված է եղանակային շոգ պայմանների հետ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են 272 հասցեներ: Ընկերության էլ. էներգիայի ծախսից հանվել է «Բյուրեղավան» տեղամասի վրա նախկինում կատարված 1500 կՎտ.ժ հավելագրումը:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 69,46 ԿՎտ.ժ կամ 0.4%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 3025 ԿՎտ/ժ կամ 11,3 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Կատարված աշխատանքներ

- Թվով 63 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 47 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:
- Թվով 392 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 104 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում


- Հինգ հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:

Խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի խափանումներ

- Հաշվետու ժամանակահատվածում 88 խոշոր պոմպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Հունիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 1 083 464 ԿՎտ.ժամ կամ 35,18% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




- Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 144,902 ԿՎտ.ժ/ամիս կամ 5,92 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 1 451 091 ԿՎտ.ժ կամ 22,09 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են հունիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	326
Կառուցված ջրագիծ	մետր	1119.3
Տեղադրված և փոխարինված փականներ	հատ	39
Կառուցված կոյուղագիծ	մետր	124
Շահագործումից հանված կոյուղագիծ	մետր	118
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	63
Վանաձոր քաղաքի տվյալների բազայի ճշգրտում և լրացում	քաղաք	1
Էրեբունի հատվածի փականների թվայնացում: Թարմացված Երևան քաղաքի ջրային ցանցի թարմացում	մետր	112083.6
Արագծոտնի մարզի գյուղ Ջարինջայի թվայնացում և տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	գյուղ	1
13 համայնքների և Մասիս քաղաքի թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում	համայնք	14
Երևան քաղաքի և Երևան մերձակա տարածքներում առկա ջերմոցների թվայնացում	քաղաք	1
Պլանային ջրանջատում 4 հասցեներում	հասցե	4
Երևան քաղաքի Էրեբունի տեղամասի ջրագծային ցանցի միացումների, ՃԿՓ-ների տեղադիրքերի, հոսքաչափերի տեղադիրքերի և ջրազրկման կետերի, փակ փականների ճշգրտում, տվյալների բազայի լրացում ԱՏՀ-ում	քաղաք	1
Գյուղերի նախնական հիդրավիկական մոդելների ստեղծում	գյուղ	8
Գյուղի քաղաքի ջրային ցանցի և ջրատարների միացումների, ՃԿՓ-ների տեղադիրքերի, հոսքաչափերի տեղադիրքերի, փակ փականների ճշտգրտում և տվյալների բազայի ստեղծում	քաղաք	1
Քարակերտի, Դալարիկի պոմպակայանների վիճակի և ռիսկի գնահատում, մուտքագրում տվյալների բազա	գյուղ	2
Կենտրոն տեղամասի վթարների քարտեզագրում և տվյալների բազայում մուտքագրում ԱՏՀ-ում	տեղամաս	1
Գեղարքունիք մարզի Սևան քաղաքի և մերձակա գյուղերի թվայնացում	գյուղեր	7
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	բաժանորդ	49
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	բաժանորդ	541
Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում	կետեր	302
Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում	կետեր	25

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

Ապարանի սանիտարական գոտի

Սանիտարական գոտու տարածքում կառուցվել է միջանկյալ միացում Ապարան քաղաքի «Ժամեր» ՕԿՋ-ն սնող մղման ջրատարի և Ապարան-Երևան ջրատարի միջև, որի արդյունքում Եզնակի պ/կ-ում դեպի «Ժամեր» ՕԿՋ պոմպը անջատելուց հետո, ջուրն ինքնահոս եղանակով մոտ 12ծ լցվում է Ապարան-Երևան ջրատար՝ 36լ/վ-ով:

Ապարան-Երևան ջրատարի վրա հայտնաբերվել է օդահեռ փական՝ մոտ 40լ/վ:



Գառնի-Երևան ջրատար

Ջրատարի վրա առաջացել էր վթար 200լ/վ ջրի արտահոսքով: Այն վերացնելու նպատակով կազմակերպվել է ջրատարի կանգառ: Արդյունքում վթարը վերացվել է, իսկ ջրամատակարարումը՝ վերականգնվել:



Արզնի 2 ջրատար

Ջրատարի վրա առաջացել է վթար՝ 250լ/վ: Այն վերացնելու նպատակով կազմակերպվել է ջրատարի կանգառ: Արդյունքում վթարը վերացվել է, իսկ ջրամատակարարումը վերականգնվել:



Գառնի-Արին Բերդ- Խարբերդ ջրատար

Ջրատարի վրա առաջացել է վթար՝ 50լ/վ, որը վերացվել է Շենգավիթ տեղամասի ուժերով:



Կաթնաղբյուրի սանիտարական գոտի

Սանիտարական գոտում հայտնաբերվել են ավելցուկային ջրեր, որոնք Զ և ԽՋՄԿ ծառայության ուժերով լցվել են Կաթնաղբյուր 3 ջրատար՝ 30լ/վ:



Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են նաև ջրաչափման, ջրաքանակների կարգավորման աշխատանքներ, ջրատարների շրջայցեր, որոնց ընթացքում հայտնաբերվել են փոքր քանակությամբ վթարներ: Դրանք վերացվել են տեղամասերի կողմից:

3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղաք Գյումրի

● Շիրակ տեղամասի և Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ փողոցին հարող 220 տնակային տարածքի հին ջրամատակարարման ցանցը, որտեղ տնակը սնուցող հին ջրագծի վրա տեղի էր ունեցել վթար: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տարածքում դեռևս գործում է Իսահակյան փողոցով անցնող, գործող $D=250$ մմ թուջե ջրագծից $D=80$ մմ սնուցվող ջրագիծ: Քանի որ նշված տարածքում անցկացված է նոր ջրամատակարարման ցանց, այն որոշվել է խցափակել փացման կետում: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=80$ մմ $L=320$ մ պողպատե ջրագիծ և տնտեսվել է $Q = 1,5$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Վանաձոր



● Ուսումնասիրություն է կատարվել Վանաձոր քաղաքի Դեմիրճյան 20 շենքի ջրագծի վրա: Պարբերաբար կրկնվող վթարներից խուսափելու համար շենքի պողպատե մուտքագիծն անհրաժեշտ եղավ փոխարինել: Փոխարինվել է $D=40$ մմ, $L=38$ մ ՊԷ ջրագիծ՝ հետագա շահագործումն անխափան կազմակերպելու համար: Արդյունքում տնտեսվել է $Q = 1$ լ/վ ջրաքանակ:

● Ուսումնասիրվել է Վանաձոր քաղաքի Գրիբոյեդով 1 շենքի ջրագիծը: Կառուցված լինելով դեռևս ԽՍՀՄ տարիներին՝ այն գտնվում էր վթարված վիճակում: Շենքի պողպատե մուտքագծի $D=63$ մմ $L=66$ մ մասը փոխարինվել է ՊԷ ջրագծով: Արդյունքում տնտեսվել է $Q = 2$ լ/վ ջրաքանակ:



● Ուսումնասիրվել է Վանաձոր քաղաքի Աղայան 74/2 շենքի ջրագիծը: Պարբերաբար կրկնվող վթարներից խուսափելու համար անհրաժեշտ եղավ փոխարինել շենքի պողպատե մուտքագծի $D=63$ մմ $L=10$ մ մասը ՊԷ ջրագծով: Արդյունքում տնտեսվել է $Q=1$ լ/վ ջրաքանակ:

Գյուղ Ջրաշեն

● Ջրաշեն գյուղում առկա էին հին և նոր բաշխիչ ցանցեր: Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից կատարվել է ուսումնասիրություն, որի արդյունքում շահագործումից հանվել է $L=570$ մ, $D=80$ մմ տրամագծի պողպատե ջրագիծ՝ փոխարենը կառուցելով $D=50$ մմ $L=10$ մ ՊԷ ջրագիծ:




Քաղաք Սևան



● Սևան քաղաքի Նալբանդյան 28 շենքի $d=150$ մմ թուջե մուտքագծի վրա Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար, որը լցվում էր կոյուղու դիտահորի մեջ: Խողովակի վթարված մասը փոխարինվել է $D=40$ մմ ՊԷ խողովակով $L=30$ մ: Արդյունքում տնտեսվել է $Q=3$ լ/վ ջրաքանակ:

Գյուղ Լճաշեն

● Հացառատ-Լճաշեն ջրատարի վրա կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Լճաշեն գյուղի մուտքածի վրա հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=3$ լ/վ ջրաքանակ:




Քաղաք Արովյան

● Արզնու խճուղում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթարված $D=80$ մմ, $L=100$ մմ պողպատե ջրագիծ, որը, շահագործումից հանելով, տնտեսվել է $Q=3$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Երևան

● Ավան վարչական շրջանի Խուղակով փողոցում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 84/4 շենքի մոտ հայտնաբերվել է գաղտնի վթար: Փոխարինվել է $D=100$ մմ պողպատե ջրագիծը $D=90$ մմ, $L=25$ մ ՊԷ ջրագծով: Արդյունքում տնտեսվել է $Q=3$ լ/վ ջրաքանակ:



● «Շահումյան» տեղամասում՝ Մելիքյան փողոցում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մելիքյան փողոցով անցնող $D=250$ մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=30$ լ/վ ջրաքանակ:

● Կենտրոն տեղամասում՝ Նորք Մարաշ 8-րդ փողոցում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար 115 տան մոտով անցնող $d=100$ մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=20$ լ/վ ջրաքանակ:



3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● **Քաղաք Մասիսի** Արարատյան 3/4 քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է հեղուկ քլորով աշխատող համակարգի կոտրված քլորաջրի խողովակի վերանորոգում, այրված խողովակների մոնտաժում և վերանորոգում:



● **Քաղաք Հրազդանի** Մաքրավան 2 քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անվտանգ աշխատանքը և ճշգրիտ դոզավորումը իրականացնելու համար իրականացվել է հեղուկ քլորի համակարգի, Աբովյան եկող ջրագիծ մտնող քլորաջրի մոնիտաժում և ինժեկցիոն մղիչների տեղադրում:




● **Քաղաք Տաշիրի** «Նովոսելցովո» քլորակայանում տեղադրվել է հեղուկ քլորի համակարգի Կիրովական գնացող ջրագծի վրա ինժեկցիոն մղիչ և 4կգ/ժ արտադրողականությամբ խափանված «Գրունդֆոս» վակուում կարգավորիչը փոխարինվել է վերանորոգված վակուում կարգավորիչով, որի նպատակն էր ապահովել հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



● **Քաղաք Վեդի** «Ուրցաձոր» ք/կ-ում քլորի ապահովման նպատակով իրականացվել է շարքից դուրս եկած քլորաջրի խողովակների վերանորոգում և մոնիտաժում:



● **Քաղաք Երևան** Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում իրականացվել է պահեստային 4կգ/ժ արտադրողականությամբ «Գրունդֆոս» վակուում կարգավորիչի վերանորոգում:



● **Քաղաք Եղեգնաձորի** «Գետափ» ք/կ-ում վերանորոգվել է «Քառասուն աղբյուր» գնացող քլորաջրի խողովակը և «Ոստան» գնացող քլորաջրի գծի վրա տեղադրվել է ՊՎՔ հակադարձ փական, որի նպատակն է ապահովել հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:

● **Քաղաք Գորիսի** «Մուխուբուրյան» ք/կ-ում նախկին քլորացվող համակարգը, որի քլորացումը կատարվում էր ջրամբարում և դուրս էր գալիս առանձին ուղղություններով մեկը գյուղեր, մյուսը՝ Գորիս քաղաք, որն էլ իր հերթին առաջացնում էր խնդիրներ քլորի տրման դոզայի հետ: Համակարգը վերամոնտաժվել է. առանձին ուղղություններով գյուղերի և քաղաքի համար կառուցվել է քլորաջրի գծեր ինժեկցիոն մղիչներով՝ մոտ 45մ, որն իր հերթին կրերի նաև քլորի զգալի ծախսի տարեկան կրճատման:



● **Քաղաք Երևանում** Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում պատրաստվել է հեղուկ քլորի կոնտեյնրերի համար սայլակ:



● «Բերդ» խմելու ջրի մաքրման կայանում կառուցվել է $D=25$, $L=50$ գծ/մ խողովակաշար և համապատասխան վայրում տեղադրվել է LUCKY PRO ֆիբրայի ջրի պոմպ, ինչի շնորհիվ ապահովվել է քլորակայանի ինժեկտորը սնուցող ջրի հաստատուն ճնշման պահանջը:



● «Բերդ» խմելու ջրի մաքրման կայանում իրականացվել է ուղղաձիգ պարզարանի թողարկ ($DN150$, $L=6$ մետր) խողովակաշարի խցանման բացման աշխատանքներ (խցանման պատճառը հանդիսանում էր խողովակաշարում առկա բետոնի կարծրություն ունեցող անհայտ ծագման նյութը, որը լցված էր խողովակաշարի գրեթե ամբողջ ծավալով): Ի տարբերություն նախկին վիճակի՝ ներկայումս պարզարանը հիդրոստատիկ ճնշման տակ պահանջվող ջրաքանակով հնարավոր է դատարկել:

● **Քաղաք Վանաձորի** «Լոռի Սպիտակ ջուր» խմելու ջրի մաքրման կայանում փոխարինվել են $DN250$ - $DN400$ մմ տրամագծի 4 հատ անսարք տեխնոլոգիական փականներ, որի արդյունքում նվազել է ջրակորուստը և բարձրացել կայանի բնականոն աշխատանքի հուսալիությունը:



● **Քաղաք Վանաձորի** «Լոռի» ՋՄԿ-ում վերակառուցվել է գլխավոր մուտքի փլուզված դարպասը, որի շնորհիվ կապահովվի մաքրման կայանի սան. գոտու տարածքի պահպանությունը:

3.7 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 50899 զանգ, որից առևտրային բնույթի զանգերը՝ 11120: Երևան քաղաքի համար եղել է 8712 զանգ:
- Հունիս ամսվա Երևանի ցուցանիշը կազմել է 78,3 %, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2408 զանգ (21.7%); Շահագործման վերաբերյալ ստացվել է 39779 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 29371 զանգ (73.8%), իսկ մարզերինը՝ 10408 զանգ (26,2%):

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	
Առևտրային	Ընդամենը	11120
	ԵՐԵՎԱՆ	8712
	ՄԱՐԶԵՐ	2408
Շահագործում	ՀԱՀԱԳՈՐԾՈՒՄ	39779
	ԱՐԵՎԵԼՔ	13875
	Շենգավիթ	1927
	Կենտրոն	2531
	Հյուսիս(Ավան, Նոր Նորք)	2838
	Էրեբունի	2122
	Պումպ	1146
	Մարզեր	3311
	այդ թվում Կոյուղու վթար	58
	այդ թվում Դիտահորի խցանում	1928
	ԱՐԵՎՍՈՒՏՔ	25904
	Արարկիր	6505
	Քանաքեռ-Զեյթուն	2757
	Մաշտոց	3864
	Շահումյան	3625
	Պումպ	2056
	Մարզեր	7097
	այդ թվում Կոյուղու վթար	91
	այդ թվում Դիտահորի խցանում	3300
	Ընդամենը	50899

ԼՐԱՏՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Եթե նախորդ տարիներին խմելու ջրի սպառումն իր պիկին հասնում էր հուլիս - օգոստոս ամիսներին, ապա այս տարի արդեն մայիսի վերջից համակարգն սկսեց աշխատել ողջ հզորությամբ: Վերագործարկվեցին պահուստային հանդիսացող «Շոր-շոր» և «Արարատյան» ջրաղբյուրները: Սակայն միննույն է ջրի սպառման կտրուկ ավելացումն առաջացրեց որոշակի խնդիրներ կայուն ջրամատակարարման ապահովման առումով, ինչն իր հերթին խորացավ 2 հանգամանքով. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից մատակարարվող էլեկտրաէներգիայի լարման տատանումներով և մի քանի մայրուղային ջրատարների վթարներով:



Բնականաբար, նման իրավիճակը ժամանակավոր դժգոհություններ առաջացրեց սպառողների շրջանում, որի մեղմացման էր ուղղված Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ աշխատանքը:


Նախ ձեռնարկեցին միջոցներ հանրությանը ստեղծված իրավիճակին ծանոթացնելու և առկա խնդիրները ներկայացնելու համար: Այսպես, ընդհանուր հաշվով 4 հրապարակում ապահովվեց ջրամատակարարման գործում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ կապված խնդիրը պարզաբանելու նպատակով:

Դրանք վերաբերում էին ինչպես գործի տեխնիկական կողմին, այնպես էլ հանրության մեջ տարածված տարատեսակ լուրերին: Հարկ է առանձնացնել «Շոգ է, շատ շոգ...» հրապարակումը լուսանկարաշարով, որն ըստ էության հանդիսացավ Վեոլիա ջրի պաշտոնական դիրքորոշումն իրավիճակի վերաբերյալ: Այս կերպ հստակ ցույց տրվեց, որ Վեոլիան ոչ թե մեղավոր կողմ է, այլ տուժված, և դրա շնորհիվ հանրության կարծիքի մեջ որոշակի դրական փոփոխություններ կատարվեցին: Ի վերջո, Օպերատորը հասավ նրան, որ ՀՀ ՀՇԿԷ-ում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն՝ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, որից հետո էներգետիկները լուծեցին խնդիրը:

Հաջորդը խոշոր մայրուղային ջրատարների վթարների պատճառով առաջացած ջրամատակարարման ընդհատումներն էին, ինչը շոգ եղանակներին առավել հիվանդագին էր ընկալվում հանրության կողմից: Իրավիճակի որոշակի լիցքաթափման համար ՀԿԲ-ն հնարավորինս օպերատիվ ներկայացնում էր վթարների պատճառներն ու բարդությունը, ինչպես նաև դրանց վերացման ուղղությամբ ընկերության կողմից տարվող աշխատանքը: Խոսքը մասնավորապես, «Գառնի - Երևան», «Գառնի - Արին-Բերդ - Խարբերդ», «Արգնի - Երևան» մայրուղային ջրատարների վթարների մասին է:

Ջրի անբավարարության մասին խոսելիս զգալի ուշադրություն է դարձվել նաև հանրության որոշ մասի կողմից շարունակվող ապօրինություններին ու քաղաքացիների կողմից խմելու ջուրը ռոռոգման նպատակով օգտագործելու զանգվածային երևույթին՝ որպես ջրի անբավարարության պատճառներից մեկի: Որպես դրա օրինակ բերվել են «Արգական-Երևան», «Ապարան-Երևան» մայրուղային ջրատարներից ջրի ապօրինի առքի դեպքերը, ինչպես նաև Սևան քաղաքում ու Երևանի Հաղթանակ թաղամասում հայտնաբերված օրինախախտումները:

Վեոլիա ջրի դիրքորոշումը սպառողներին հասցնելու համար ՁԼՄ-ների հետ հունիսին ապահովվել է շատ ակտիվ և երկկողմանի կապ: ՀԿԲ-ի կողմից օգտագործվել են բոլոր հնարավոր միջոցները իրավիճակը լրագրողներին ճիշտ ներկայացնելու, օբյեկտիվ պատճառները նշելու, նրանց Վեոլիայի համախոհը դարձնելու և նրանց իսկ միջոցով սպառողների դժգոհությունը մեղմելու նպատակով: Ընդ որում, ՁԼՄ-ներին ցուցաբերվել է դիֆերենցված մոտեցում. կառուցողական դիրքորոշում ունեցող, իրավիճակը ճիշտ հասկանալ ցանկացողների հետ տարվել է հնարավորինս հանգամանալից աշխատանքը, իսկ կոմունալ թեման քաղաքականացնել





ցանկացողներին տրվել է սահմանափակ և ընդհանուր բնույթի տեղեկատվություն՝ սպառողներին թուրքիմացության կամ միտումնավոր կերպով մոլորության մեջ չզցնելու համար:

Ջրամատակարարման իրավիճակի հետ կապված հանրության հետ տարվող աշխատանքի բարձրակետը կարելի է համարել «Հանրային» հեռուստաալիքի «Լուրեր» լրատվական ծրագրով հեռարձակված հաղորդումը Վեոլիա Ջուր ընկերության Կարգավարական ծառայությունից, որը զգալի ազդեցություն ունեցավ իրավիճակի լիցքաթափման վրա:

Սակայն հանրային կարծիքի վրա դրականորեն ազդելու համար միայն նման հրատապ բնույթի միջոցառումներ չեն իրականացվել: Տնօրինության հանձնարարությամբ հունիսին ամենաակտիվ կերպով ներկայացվել են ընկերության միջոցներով իրականացվող

ջրաշինարարական ծրագրերը: Նպատակը մի կողմից ցույց տալն էր ջրամատակարարման ընդհատումների ժամանակավոր և պատահական բնույթը, մյուսից՝ Վեոլիայի գործարար համբավի բարձրացումը, որը, չնայած դժվարություններին, այդ ընթացքում կայուն կերպով շարունակել է առաջընթացն ու համակարգի հետագա զարգացումը:

Մասնավորապես, «Ջրաշինարարության նոր ծրագրեր Երևանում» խորագրի ներքո հանրությանը ներկայացվեց շինարարական աշխատանքների ծավալը և ընթացքը Երևանի Էրեբունի, Արաբկիր, Աջափնյակ, Նոր Նորք, Շենգավիթ վարչական շրջաններում: Իսկ «Ջրաշինարարությունը ՀՀ մարզերում» խորագրի ներքո խոսվեց Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի ավելի քան 10 համայնքներում ինժեներական կառույցների շինարարության կամ վերանորոգման մասին, այդ թվում՝ նոր պոմպակայանի՝ Նոյեմբերյանի տարածաշրջանում:

Ամենակարևոր միջոցառումն այստեղ Արարատի մարզի Վեդի քաղաքում օրվա կարգավորիչ ջրամբարների ու ջրագծերի հանդիսավոր շահագործումն էր, որին ներկա էին պաշտոնատար անձինք ՀՀ ՏԿԵՆ-ից, Ջրային կոմիտեից, Վեդիի համայնքապետարանից: Միջոցառումը լուսաբանվեց «Հանրային» հեռուստաալիքի «Լուրեր» լրատվական ծրագրով:

Ընդհանուր առմամբ ՀԿԲ-ին, դատելով մամուլի արձագանքներից և ընկերության տնօրինության գնահատականից, հաջողվել է կատարել առաջադրված խնդիրը՝ հունիսին ստեղծված ոչ դյուրին իրավիճակում Վեոլիայի գործունեությանը հանրությանը օբյեկտիվորեն ներկայացնելու և այդ կերպ գործարար համբավը պահպանելու ու սպառողների դժգոհությունը մեղմելու գործում:

Այս բոլոր հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:

Ջրաշինարարության նոր ծրագրեր Երևանում

«Տիչինայի փողոցով» Տիչինայի 3-րդ երջանցից փնջև Անդրանիկի փողոց ջրագծերի վերակառուցում» ծրագրի երջանակներում 600 մետր երկարությամբ 300մմ տրամագծով նոր խողովակադար է անցկացվում... **Տեսե՛քլ մզկի՛ն**



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Բաժնի կողմից մշակվեց և Ընկերության Տնօրենների խորհրդի նիստին փոխանցվեց 2021 թվականի հունվար-մայիս ժամանակահատվածում Առողջություն և Անվտանգություն միջոցառումների մասով ամփոփ հաշվետվության հայերեն և անգլերեն տարբերակները:

● Առաջնորդվելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման (ԲՌԿ) ստանդարտի պահանջներով՝ մշակվեց «Աշխատանքներ բարձրության վրա» ստանդարտի վերաբերյալ նախատեսվող դասընթացի պրեզենտացիայի նյութը:

● Մշակվեց Անվտանգության ստուգայցների պլան-ժամանակացույցերը:

● Թարգմանվեցին և համապատասխանեցվեցին «Գրուպի Առողջության և Անվտանգության 7-րդ Միջազգային Շաբաթ» միջոցառման կազմակերպման ուղեցույցներ/պրեզենտացիաները, որոնք տրամադրվեցին Ստորաբաժանումների պատասխանատուներին:

● Կատարվեցին հուլիսի 15-ին Շիրակի մարզում կայանալիք ՀՇՈՒ-ի կազմակերպչական-փաստաթղթերի մշակման աշխատանքները:

● Թարգմանվեց և ստորաբաժանումների պատասխանատուներին տրամադրվեց Վեոլիա Գրուպի բիզնես միավորներում սույն թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում նախատեսվող «Կիրճերանվտանգության ճգնաժամի կառավարման վարժանք»-ի վերաբերյալ փաստաթուղթը:

5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանումներից ՈԱԱ բաժնին ներկայացվել են կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

● Շարունակվել են Ընկերության ստորաբաժանումներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:

5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱԼՆԵՐ

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ և 254-րդ հոդվածների, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Վտանգավոր քիմիական նյութերի տեղափոխում, պահեստավորում և գործածում» ԲՌԿ ստանդարտի պահանջներով և հիմք ընդունելով Ընկերության «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և աղմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, բաժնի կողմից Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 12 աշխատողի համար կազմակերպվեց և իրականացվեց




▶ «Քլորակայանների (ԱՎՕ-ների) անվտանգ շահագործման և տեխնիկական վիճակի հսկողության պատասխանատու անձանց որակավորման» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց և գիտելիքների ստուգում

▶ «Վտանգավոր քիմիական նյութերի հետ աշխատանքին ներկայացվող ԲՌԿ ստանդարտի պահանջներ» առկա դասընթացը:

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ և 254-րդ հոդվածների, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Ամբարձման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջներով և հիմք ընդունելով Ընկերության «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և ադմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, բաժնի կողմից Ընկերության ամբարձիչ մեքենաների պատասխանատու անձ հանդիսացող 7 աշխատողի համար կազմակերպվեց և իրականացվեց «Ամբարձիչ մեքենայի տեխնիկապես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձի որակավորում» և Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթացները և գիտելիքների ստուգում:



Պետք է նշել, որ վերոնշյալ առկա դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացների մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարը կրեցին դիմակներ:




● Բաժնին Ընկերության Ջրի որակի վարչության տեղամասային և կենտրոնական լաբորատորիաների թվով 26 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Լաբորատոր անձնակազմին ներկայացվող անվտանգության պահանջներ» հեռավար դասընթացը:

● Բաժնին Ընկերության Ջրի որակի վարչության կենտրոնական լաբորատորիաների թվով 9 աշխատողի համար կազմակերպեցին և իրականացրեցին «Սթրեսի կառավարում» և «Բաժանորդների որակի սպասարկման չափորոշիչները» հեռավար դասընթացները:



2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՄԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.4. ԱՌԵՎՔՊ ՄԱՍՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ


● Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի N 46-Ն որոշմամբ սահմանված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման», Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 23/12/2020թ. N 469-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ սույն թվականի հունիսի 18-ին, ՈԱԱ Բաժնի համակարգմամբ, Ընկերության «Հյուսիս» Շահագործման տնօրինության «Հրագդան» շահագործման տեղամասի աշխատողները և ՈԱԱ Բաժնի պատասխանատուները մասնակցեցին «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով Շտաբային ուսումնավարժանքին:

● Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի N 46-Ն որոշմամբ սահմանված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման», Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 29.12.2020թ. N 429-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ սույն թվականի հունիսի 25-ին, ՈԱԱ Բաժնի և «Շիրակ» շահագործման տեղամասի աշխատողները մասնակցեցին «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով Շտաբային ուսումնավարժանքին, որից հետո պատրաստվեց համապատասխան զեկույց և ներկայացվեց ՀՀ Շիրակի մարզպետին:

5.5. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ



● Բաժնի անվտանգության պատասխանատուները, նախօրոք մշակված պլան-ժամանակացույցերի համաձայն, իրականացրեցին անվտանգության ստուգայցեր՝ Ընկերության թվով 70 (23 քլորակայան, 9 պոմպակայան, 3 ԿՄԿ և 35 ստորաբաժանում/վարչական շենք) ՀՏԿ-ներում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

2021 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



5.6. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Ղեկավարվելով Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքներում» ԲՌԿ ստանդարտի պահանջներով, իրականացվել են Ընկերության վթարային խմբերին տրամադրված «GasAlert MicroclipX3» մոդելի թվով 17 գազավերլուծիչի հերթական ստուգաչափման և աշխատանքային վիճակի ստուգման աշխատանքները:



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Հունիս ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝

- Իրականացվել է Շիրակի 94 հասցեի տեսահսկման համակարգի արդիականացման համար տեխնոլոգիաների նախագծի պատրաստում և նախնական հաշվարկ:
- Պոմպակայանների տեսահսկման համակարգերի տեխնիկական վիճակի նախնական գնահատման և պոմպակայանների տեսահսկման համակարգերի արդիականացման հնարավոր տարբերակների նախագծման և գնահատման նպատակով կազմակերպվել և իրականացվել է այց մի քանի պոմպակայան:
- Մեկնարկել է 1-85 զանգերի կենտրոնի համակարգի արդիականացման աշխատանքները՝ համաձայն նոր պահանջներին:
- Մեկնարկել է 1-85 զանգերի կենտրոնին հասցեագրված զանգերի ուղղու նոր տրամաբանության մշակումը՝ համաձայն նոր պահանջներին:
- Մեկնարկել է 1-85 զանգերի կենտրոնի համար նոր ձայնագրությունների պատրաստման և գնման գործընթացը:
- Երաշխիքային սպասարկման շրջանակներում իրականացվել է MSA 2040 տվյալների պահոցի կոշտ սկավառակի փոխարինում:
- Կազմակերպվել և անցկացվել է “BeyondTrust” հեռահար սպասարկման համակարգի պիլոտային տարբերակի ներդրմանը նվիրված ժողով: Քննարկվել են տեխնիկական մանրամասներ և արտոնագրերի տարբերակները և քանակները:
- Տեղադրվել և շահագործման է հանձնվել հերթերի կառավարման “EarlyOne” համակարգը Ֆուչիկ 3/1 հասցեում:
- Փոխարինվել է հեռախոսային համակարգի ներքին հեռախոսների GrandStream կայանը՝ Լվովյան 76/1 հասցեում:
- Մեկնարկել է ինդուստրիալ համակարգերի կիբեռ անվտանգության արդիականացման համար նախնական գործերի պլանավորման գործընթացը:
- “Վեոլիա” Խմբի IT անվտանգության կողմից ձեռնարկված “Top 25” ինդուստրիալ համակարգերի կիբեռ անվտանգության նախագծի շրջանակներում “Themis” համակարգում լրացվել է հարցաշար ինդուստրիալ ոլորտի առկա կիբեռ ռիսկերի գնահատման և հետագա աշխատանքների ճանապարհային քարտեզի ստեղծման համար:
- Մասնակցություն է ցուցաբերվել “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի ժողովին: Քննարկվել են արդիական SS վտանգները և Խմբի SS անվտանգության նախագծերը:
- Ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկից առանձնացվել և բաշխվել են սարքավորումների մի մասը: Փոխարինվել են փչացած մոնիտորներ և հնամաշ համակարգիչներ կազմակերպության աշխատակիցների մոտ:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:
- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:
- Սպասարկվել է մոտ 250 զանգ IT բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել և փակվել է մոտ 310 աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Հունիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կատարվել են մի շարք ծրագրային թարմացումներ ինտերակտիվ համակարգում:
- SS վարչության աշխատակիցների ողջ խմբով անցկացվել են ամենօրյա խմբային քննարկումներ:
- Տեղի է ունեցել հանդիպում «Հայկական Օրագրեր» ընկերության ծրագրավորողների հետ՝ ծրագրային նոր մեխանիզմի ներդրման ուղղությամբ:
- Առևտրային տնօրինության համապատասխան աշխատակիցների հետ քննարկում է տեղի ունեցել, որի արդյունքում Առևտրային տնօրինության տեղամասի պետերին իրավունք է տրվել ինտերակտիվ համակարգում տեսուչների տարածքային տեղաբաշխում իրականացնել իրենց կողմից:
- «Peleka» ընկերության հետ տարվել են բանակցություններ, կատարվել են տեխնիկական մանրամասների

ճշգրտումներ՝ բաժանորդներին հաղորդագրությունների ուղարկման համակարգի վերաբերյալ:

● Քննարկվել են հաղորդագրությունների գնային քաղաքականությունը նվազեցնելու հարցերը, անվտանգության հարցերը, ինտեգրման հնարավորությունները:

● Այնուհետև կնքվել է պայմանագիր և անցում է կատարվել «Peleka» ընկերությանը՝ որպես նոր օպերատորի:

● Ակտեր.

Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. հս/մ	մլն. դրամ
Հյուսիս	4	5.2	0.9
Էրեբունի	16	6.1	1.0
Ծենգավիթ	7	2.4	0.4
Կենտրոն	13	6.0	1.0
Արաբկիր	12	6.8	1.2
Մաշտոց	9	7.6	1.2
Շահումյան	12	7.8	1.3
ԱՎԲ	112	74.9	12.6
Ծիրակ	8	2.6	0.4
Արթիկ	2	0.4	0.1
Արարատ	27	2.5	0.4
Աբովյան	22	8.6	1.4
Հրազդան	13	3.5	0.6
Ալավերդի	1	0.3	0.0
Ապարան	1	0.3	0.1
Արտաշատ	16	2.2	0.3
Գավառ	24	7.4	1.2
Եղեգնաձոր	1	0.3	0.0
Էջմիածին	5	1.8	0.3
Թալին	1	0.3	0.0
Իջևան	5	0.8	0.1
Կապան	1	0.5	0.1
Մասիս	8	2.9	0.5
Արմավիր	4	1.2	0.2
Սևան	2	0.5	0.1
Վայք	2	0.8	0.1
Աշտարակ	21	4.8	0.7
Զարենցավան	2	1.0	0.2
Սպիտակ	5	2.0	0.3
Ստեփանավան	2	1.0	0.2
Ընդամենը	358	162.5	27.1

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահովաբակցման գործառույթներ). Ապահովաբակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Մնասթեղություն	
	քանակ	հազ. հս/մ	քանակ	հազ. հս/մ
Հյուսիս	16	4.26	52	0.36
Էրեբունի	15	8.16	67	0.86
Ծենգավիթ	11	2.35	94	0.89
Կենտրոն	12	9.10	57	1.06
Արաբկիր	5	3.34	47	0.83
Մաշտոց	19	6.34	84	1.88
Շահումյան	21	5.55	76	0.32
Քանաքեռ-Զեյթուն	7	2.11	14	0.12
Լոռի	15	7.32	34	0.17
Ծիրակ	13	2.82	40	0.20
Արթիկ	2	0.71	28	0.55
Արարատ	1	0.09	12	0.05
Աբովյան	5	1.29	62	0.34
Հրազդան	29	7.73	44	0.21
Ալավերդի	1	0.26	12	0.07
Աշոցք		-	12	0.05
Ապարան	1	0.17	9	0.02
Արտաշատ	6	1.14	27	0.15
Գավառ	2	0.32	21	0.16
Գորիս	2	1.03	24	0.29
Դիլիջան	5	2.32	17	0.18
Եղեգնաձոր		-	8	0.09
Էջմիածին	8	3.77	35	0.56
Թալին		-	2	0.00
Իջևան	7	0.49	17	0.06
Կապան	10	3.87	24	3.36
Ճամբարակ	1	0.11	2	0.01
Մասիս	14	5.03	51	0.63
Մարտունի		-	4	0.02
Մեղրի	2	1.74		-
Նոյեմբերյան		-	12	0.16
Արմավիր	4	1.80	41	0.33
Ջերմուկ		-	1	0.01
Սևան	2	0.37	15	0.03
Վայք		-	3	0.04
Աշտարակ	4	0.95	24	0.15
Զարենցավան	8	3.42	52	0.24
Միսիան	2	0.77	9	0.07
Մայիտակ	1	0.13	17	0.05
Ստեփանավան	4	1.80	10	0.62
Տաշիր		-	6	0.03
Ընդամենը	255	90.69	1166	15.22



«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադունցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am